**Գրանցված է**

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկում

Նախագահ՝ Արթուր Ջավադյան

« __» ___________ 2011թ.

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ»
## ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

# ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

# ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ
# ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ

1. «Սակագների մասին կանոններ»-ի 7.1.1. կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

| | |
|---|---|
| 7.1.1. Արժեթղթերով (բացառությամբ պարտատոմսերի) առուվաճառքի, նվիրատվության (բացառությամբ նվիրատվության գործարքների հիման վրա արժեթղթերի փոխանցում մեկ անձնական հաշվից մյուսին, եթե նվիրատվությունը կատարվում է Հայաստանի Հանրապետությանը, հասարակական միավորումներին, հիմնադրամներին, մանկատներին, օժանդակ (արատավոր և հաշմանդամ երեխաների ուսուցման համար նախատեսված) դպրոցներին, զոհված ազատամարտիկների և ՀՀ սահմանների պաշտպանության համար զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին՝ ամուսիններին, անչափահաս երեխաներին, առանց խնամքի մնացած ծնողներին), պետական սեփականություն հանդիսացող արժեթղթերի | հանձնարարականում (դատավճռում կամ վճռում) նշված փոխանցվող արժեթղթի (արժեթղթերի) անվանական արժեքի ( ընդհանուր անվանական արժեքի) 0.05%- ի չափով, սակայն ոչ պակաս քան 4500 ՀՀ դրամը և ոչ ավել քան 600 000 ՀՀ դրամը |

| | |
|---|---|
| մասնավորեցման, դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի հիման վրա (երբ տվյալ վճռով պարտապանը Դեպոզիտարիան չէ), ինչպես նաև ցանկացած այլ հիմքով (բացառությամբ սույն կանոնների 7.1.2, 7.1.3. և 7.1.4. կետերով սահմանված դեպքերի) արժեթղթերի փոխանցում մեկ անձնական հաշվից մյուսին | |

2. Անցումային դրույթներ

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Սակագների մասին կանոններ»-ի անբաժանելի մասը և ուժի մեջ է մտնում ՀՀ կենտրոնական բանկում գրանցման պահից երեք ամիս հետո:

Հաստատված է
«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ
Դիտորդ խորհրդի 26.07.2011թ. որոշմամբ Վահան Ստեփանյան

ք. Երևան